ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«14» սեպտեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:
ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է համայնքի ղեկավարին փոխարինող Ռ.Սանոյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 23 (քսաներեք) անդամներ՝

Ա.Ադամյան, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Տ.Փանոսյանը, Գ.Սարգսյանը, Վ.Հունանյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Ս.Աստոյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Սարգսյանը, Ս.Մարտիրոսյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Վարդանյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական տասնմեկերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻԱՆ ՀԱՏԱԿԱՆԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22

դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել ավագանու չորս անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):
2. Հաստատել հանձնաժողովի հետևյալ կազմը՝
1) Հասմիկ Լևոնի Եղիազարյան - «Հայկական Վերածնունդ» խմբակցություն,
2) Սուսաննա Հովհաննեսի Աստոյան- «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն,
3) Կարեն Ժորայի Միքայելյան - «Բալասանյան» խմբակցություն,
4) Արտյոմ Հակոբի Ղարաղազարյան– ավագանու անկախ անդամ:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 223–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 223-Ն որոշման 1–ին կետով հաստատված հավելվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3 հավելվածների:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 412215600 (ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՎԵՑ ՀԱՐՅՈՒՐ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԸ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 3 (երեք) եռամսյակների համար նախատեսված 412 215 600 (չորս հարյուր տասներկու միլիոն երկու հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել ֆոնդային մաս:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել սույն որոշման 1-ին կետերում նշված փոփոխությունը՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 4 (ՉՈՐՍ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Թույլատրել Գյումրի համայնքի հաշվեկշռում առկա թվով 145 (մեկ հարյուր քառասունհինգ) աթոռներ որպես նվիրաբերություն հանձնել կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:
2.Գույքի հանձման-ընդունման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5 (ՀԻՆԳ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ –22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Կազմակերպություններին շենքի, գույքի ընթացիկ վերանորոգման և գույքի ձեռքբերման համար որպես նվիրատվություն հատկացնել 4 332 500 (չորս միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1, 8/2/2, 8/2/3 գործառական դասակարգումների (ըստ հավելվածի) (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5 (ՀԻՆԳ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 5 (հինգ) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների հուլիս և օգոստոս ամիսների աշխատավարձը և աշխատավարձից պահված հարկերը ամբողջությամբ վճարելու համար, որպես սուբսիդիա հատկացնել 3 570 000 (երեք միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/2/3 գործառական դասակարգման (4511)

«Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «Ա.ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 4 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔՈՒՄ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կազմակերպության շենքում ջեռուցման համակարգի տեղադրման նպատակով հատկացնել 5107000 (հինգ միլիոն մեկ հարյուր յոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: 2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ –23

դեմ – 0

ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սեպտեմբերի 21-ի՝ Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի 30-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 700 000 (յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին ըստ անհրաժեշտության կատարել լրացուցիչ հատկացումներ Հայաստանի Հանրապետության անկախության տոնի 30-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ –18

դեմ – 0

ձեռնպահ –4 (Լ.Բարսեղյան, Ա.Վարդանյան, Ա.Գրիգորյան, Ա.Խաչատրյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին որպես նվիրատվություն հատկացնել 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Արմենուհի Մխիթարյանի «Քարերի հրաշքը» մանկական ստեղծագործությունների ժողովածուն տպագրելու համար:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 86 (ՈՒԹՍՈՒՆՎԵՑ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Նախագիծը ներկայացնելիս տիկին Լ.Ջիլավյանը առաջարկեց մի քանի օր առաջ ավտովթարի ենթարկված բռնցքամարտի գյումրեցի մարզիչ Սուրեն Ավետիսյանին Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգուլ նախատեսված սահմաններում՝ **200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն ցուցաբերելու նպատակով, նրան նույնպես ներառել վերը նշված որոշման հավելվածում՝ կատարելով համապատասխան փոփոխությունները նաև որոշման նախագծում:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 87 (ութսունյոթ) անձանց որպես դրամական օգնություն կանխիկ հատկացնել 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց՝ լրամշակված տեսքով՝ ներառելով առաջարկված փոփոխությունները:

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՂՈՒՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Աղունիկ Թորոսյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը

կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աղունիկ Թորոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Քրիստինե Պողոսյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քրիստինե Պողոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎՆԱՍՎԱԾ ԿՏՈՒՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կազմակերպության շենքի վնասված կտուրի վերանորոգման նպատակով հատկացնել 369 000 (երեք հարյուր վաթսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա- տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ 5/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 21

դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հադիսացող (հիմք՝ սեփականության վկայական 14112014-08-0029) Ղանդիլյան 5/4 հասցեում գտնվող շինությունների վերանորոգման նպատակով հատկացնել 61 530 000 (վաթսունմեկ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ, ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2021 թվականի ընթացքում Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում լավագույն մարզական արդյունքներ ցուցաբերած Գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 21600000 (քսանմեկ միլիոն վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՇԻՐԱԿ» ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Շիրակ» գերեզմանատանը հուղարկավորված զինծառայողների գերեզմանների կառուցման և բարեկարգման աշխատանքների նպատակով հատկացնել 20 000 000 (քսան միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա- տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/2/7 գործառական դասակարգման (5112) «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՂՄԻՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄՈՆ-ԴԸ ՄԱՐՍԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՆՎԵՐ ԽԱՉՔԱՐ-ՑԱՅՏԱՂԲՅՈՒՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 21

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի կողմից Ֆրանսիայի Մոն-Դը Մարսան քաղաքին որպես նվեր խաչքար-ցայտաղբյուրի ձեռքբերման և տեղափոխման աշխատանքների իրականացման նպատակով հատկացնել 6 000 000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Թույլատրել Գյումրի համայնքի ղեկավարին կարիքն առաջանալու դեպքում սույն որոշման 1-ին կետում նշված նպատակի համար հատկացնել լրացուցիչ դրամական միջոցներ:

3.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա- տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/2/7 գործառական դասակարգման (5112) «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. «ԳՅՈՒՄՐԻ ԳԱՐԵՋՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԹՎՈՎ 15 (ՏԱՍՆՀԻՆԳ) ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17

դեմ – 0

ձեռնպահ – 2 (Ա.Վարդանյան, Ա.Գրիգորյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Թույլատրել Գյումրի համայնքի ղեկավարին՝

1) «Գյումրի Գարեջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք բերել «ՀԱՅԷՐ ԿԱԷԼՔՅՈՒ 6770 ՋԻՍԻ» (HIGER KLQ 6770 GC) մակնիշի 22+1 նստատեղ ունեցող թվով 15 (տասնհինգ) ավտոբուսներ,

2) ավտոբուսները ձեռք բերել 3 (երեք) անկախ գնահատողների կողմից տրված փորձագիտական եզրակացությունների հիման վրա՝ գնահատված արժեքներից նվազագույն արժեքի չափով՝ օրենքով սահմանված կարգով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑԻ N 1/46 ՀԱՍՑԵԻ 75.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Քաղաքացիներ Գագիկ Արմենակի Բակմազյանին և Անահիտ Սերգոյի Բակմազյանին որպես ընդհանուր համատեղ սեփականություն ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետի փողոցի N 1/3 հասցեի 945.0 (ինը հարյուր քառասունհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասով առևտրի և սպասարկման օբյեկտին հարակից Տրդատ Ճարտարապետի փողոցի N 1/46 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 75.0 (յոթանասունհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ առևտրի և սպասարկման օբյեկտի ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 216600 (երկու հարյուր տասնվեց հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գագիկ Արմենակի Բակմազյանին և Անահիտ Սերգոյի Բակմազյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑԻ N 8/7 ՀԱՍՑԵԻ 35.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Ա.Գրիգորյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Քաղաքացի Վահրամ Արշակի Աղաբաբյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Դուդկոյի փողոցի N 8/2 հասցեի 60.0 (վաթսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտեխսպասարկման օբյեկտին հարակից, Դուդկոյի փողոցի N 8/7 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 35.0 (երեսունհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ավտոտեխսպասարկման օբյեկտի ընդլայնման նպատակով:
2.Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 101080 (մեկ հարյուր մեկ հազար ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վահրամ Արշակի Աղաբաբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 4/2 ՀԱՍՑԵԻ 75.22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Ա.Գրիգորյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Քաղաքացիներ Արտուշ Ալբերտի Հեքիմյանին և Աննա Աշոտի Արմենակյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Լոմոնոսովի փողոցի N 4/1 հասցեի 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասով բնակելի տանը հարակից, Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Լոմոնոսովի փողոցի N 4/2 հասցեի կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 75.22 (յոթանասունհինգ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ բնակելի տան ընդլայնման նպատակով՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 143971 (մեկ հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր յոթանասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Արտուշ Ալբերտի Հեքիմյանին և Աննա Աշոտի Արմենակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀՆՈՑԱՎԱՆ 1-ԻՆ ՇԱՐՔԻ N 38/3 ՀԱՍՑԵԻ 17.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Քաղաքացիներ Սամվել Ժորայի Պետրոսյանին և Անահիտ Սամսոնի Պետրոսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Հնոցավան 1-ին շարքի N 38 հասցեի 512.66 (հինգ հարյուր տասներկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասով բնակելի տանը հարակից, Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության Հնոցավան 1-ին շարքի N 38/3 հասցեի 17.4 (տասնյոթ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ բնակելի տան ընդլայնման նպատակով, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

2.Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր

տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 33304 (երեսուներեք հազար երեք հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սամվել Ժորայի Պետրոսյանին և Անահիտ Սամսոնի Պետրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉԵՐԲԻՆԱՅԻ ՓՈՂՈՑ N 1/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շչերբինայի փողոց N 1/8 հասցեում ինքնակամ կառուցված 2,6 (երկու ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 47,8 (քառասունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 10 (տասը) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ պարիսպը կառուցած քաղաքացի Մարուս Սիոնի Խաչատրյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված պարսպի և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 30000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ N 5/4 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՇՎԱՔԱՐԱՆՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 161-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 18

դեմ – 0

ձեռնպահ – 2 (Լ. Բարսեղյան, Ա. Գրիգորյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 31082021-08-0037) Ռիժկովի փողոց N 5/4 հասցեի 51,55 (հիսունմեկ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ շվաքարանը և դրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0,005155 (զրո ամբողջ հինգ հազար մեկ հարյուր հիսունհինգ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0752-0062) մրցութով 20 (քսան) տարի ժամկետով տրամադրել վարձակալության՝ բացօթյա սրճարան կազմակերպելու նպատակով:
2. Մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ռիժկովի փողոց N 5/4 հասցեի հողամասը մրցույթով

կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային չափ սահմանելու մասին» N 161-Ա որոշումը:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 141/5 ՀԱՍՑԵԻ 13.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Քաղաքացիներ Գևորգ Վոլոդյայի Պասկևիչյանին և Վարդուհի Լեռնիկի Պասկևիչյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N 141/4 և N 53/2 հասցեների 214.8 (երկու հարյուր տասնչորս ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հողամասով առևտրի սրահին հարակից, Երևանյան խճուղի N 141/5 հասցեի Գյումրի համայնքին պատկանող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 13.95 (տասներեք ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ առևտրի սրահի ընդլայնման նպատակով, աստիճաններ կառուցելու համար:
2.Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 95334 (իննսունհինգ հազար երեք հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գևորգ Վոլոդյայի Պասկևիչյանին և Վարդուհի Լեռնիկի Պասկևիչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ N 6/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 1(Ա.Գրիգորյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17062021-08-0016) Պարույր Սևակի փողոց N 6/6 հասցեի 0,00863 (զրո ամբողջ ութ հարյուր վաթսուներեք հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0040-0020) մրցույթով կառուցապատման իրավունքով 10 (տասը) տարի ժամկետով տրամադրել՝ նախամուտք և աստիճանավանդակ կառուցելու նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 225000 (երկու հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑ N 1/13 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27082021-08-0038) Սավոյան փողոց N 1/13 հասցեի 0,03916 (զրո ամբողջ երեք հազար ինը հարյուր տասնվեց հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0317-0022) մրցույթով կառուցապատման իրավունքով 10 (տասը) տարի ժամկետով տրամադրել օգտագործման՝ բարեկարգման, կանաչապատման նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ N 74/16 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

4. Գյումրի համայնքին պատկանող Տերյան փողոց N 74/16 հասցեի 5,0 (հինգ) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ կառուցված տաղավարը, 5,1 (հինգ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շվաքարանը, 0,57 (զրո ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բենզինի լցակետը և դրանց կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0,00101 (զրո ամբողջ հարյուրմեկ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցութով 20 (քսան) տարի ժամկետով տրամադրել վարձակալության:
5. Մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 25/2 ՀԱՍՑԵԻ 300.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ 451.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 3 (Լ.Բարսեղյան, Ա.Վարդանյան, Ա.Խաչատրյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 25/2 հասցեի 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և հարակից 451.0 (չորս հարյուր հիսունմեկ) քառակուսի մետր մակերեսով տարածքի՝ բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 143/1 ՀԱՍՑԵԻ 0.017345 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թումանյան փողոց N 143/1 հասցեի 08-001-1395-0002 կադաստրային ծածկագրով, 0.017345 (զրո ամբողջ տասնյոթ հազար երեք հարյուր քառասունհինգ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության հողեր՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑ N 5/10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28092020-08-0045 վկայական) Թետչերի փողոց N 5/10 հասցեի 54.37 (հիսունչորս ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը ու դրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-0358-0084 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.013831 (զրո ամբողջ տասներեք հազար ութ հարյուր երեսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:

2. Հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 21-ի N 04212112 անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը՝ սահմանել աճուրդի մեկնարկային գին՝ 2 614 000 (երկու միլիոն վեց հարյուր տասնչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑ N10/1 ՀԱՍՑԵԻ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 643.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ 293.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թետչերի փողոց N10/1 հասցեի հյուրանոցի զբաղեցրած 643.39 (վեց հարյուր քառասուներեք ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել, իսկ 293.27 (երկու հարյուր իննսուներեք ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 10 (տասը) տարի ժամկետով վարձակալության տրամադրել քաղաքացի Նադեժդա Սարոյանցին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության 643.39 (վեց հարյուր քառասուներեք ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի օտարման գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1(մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 4396927 (չորս միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար ինը հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ հյուրանոցի զբաղեցրած 293.27 (երկու հարյուր իննսուներեք ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի վարձակալության գին սահմանել տարեկան 70.0 (յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ 1(մեկ) քառակուսի

մետրի դիմաց ընդամենը՝ 20529 (քսան հազար հինգ հարյուր քսանինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ N 58/1 ՀԱՍՑԵԻ 618.89 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Տալ համաձայնություն՝ Գյումրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 1-ին թաղամասի N 58/1 հասցեի 618.89 (վեց հարյուր տասնութ ամբողջ ութսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն աճուրդով օտարելու առաջարկությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ N 181/13 ՀԱՍՑԵԻ 83.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Քաղաքացիներ Մամիկոն Աղասի Եղունյանին և Գայանե Թորգոմի Եղունյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի N 181 հասցեի 150.0 (մեկ հարյուր հիսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասով կիսակառույց հասարակական շինությանը հարակից, Շիրակացու փողոցի N 181/13 հասցեի Գյումրի համայնքին պատկանող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 83.0 (ութսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ կիսակառույց հասարակական շինության ընդլայնման նպատակով:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 872662 (ութ հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մամիկոն Աղասի Եղունյանին և Գայանե Թորգոմի Եղունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

Գյումրի համայնքի ավագանու նիստի օրակարգի նիստի օրակարգի 37-րդ հարցը նախապես հանվել է հեղինակի կողմից:

ԼՍԵՑԻՆ.

37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ԱՌՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի և «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի կողմից ստորագրված համատեղ գործունեության համաձայնագրին՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

38. ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԵՔՍԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ 5-ՐԴ ՓՈՂՈՑ N 12 ՀԱՍՑԵԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 501,15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Տալ համաձայնություն Գյումրի քաղաքի Անի թաղամաս 5-րդ փողոց N 12 հասցեի պետական սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ 501,15 (հինգ հարյուր մեկ ամբողջ տասնինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի օտարման առաջարկությանը՝ քաղաքացի Ալեքսան Հովհաննեսի Կարապետյանի կողմից իրականացվող ներդրումային ծրագրին աջակցելու նպատակով:

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալեքսան Հովհաննեսի Կարապետյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ, ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՍՄԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սպանդարյան փողոցի N 24 շենքի ճակատային մասում Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, Գյումրու պատվավոր քաղաքացի Հասմիկ Պարույրի Կիրակոսյանին նվիրված հուշատախտակի տեղադրմանը:

2. Հուշատախտակի տեղադրման ծախսերը կատարվելու են Հասմիկ Պարույրի Կիրակոսյանի հարազատների միջոցներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոնա Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանու) 2019 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 80-Ա որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 3-րդ կետի 6-րդ սյունակի «1 740 000» թիվը փոխարինել «2 510 000» թվով:

2. Ավագանու 2020 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 34-Ա որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 47-րդ կետի 2-րդ սյունակի «11» թիվը փոխարինել «10» թվով,

2) 6-րդ սյունակի «400 000» թիվը փոխարինել «560 000» »թվով:

3. Ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 114-Ա որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 6-րդ կետի 6-րդ սյունակի «700 000» թիվը փոխարինել «1 000 000» թվով:

4. Ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Աճուրդով օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերի աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 137-Ն որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 1-ն կետի 6-րդ սյունակի «2 300 000» թիվը փոխարինել «2 800 000» թվով:

5. Ավագանու 2018 թվականի նոյեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերը մրցույթով, կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային չափեր սահմանելու մասին» N 174-Ա որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետի 2-րդ սյունակի «10» թիվը փոխարինել «11» թվով ,

2) 6-րդ սյունակի «163 000» թիվը փոխարինել «1 445 000» թվով:

6. Ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 100-Ն որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 15-րդ կետի 6-րդ սյունակի «420 000» թիվը փոխարինել «2 319 000» թվով:

7. Ավագանու 2020 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Ջիվանու փողով N 1/1 հասցեի հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու աճուրդով և հողամասի վարձավճարի մեկնարկային չափ սահմանելու մասին» N 186-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետում «240000 (երկու հարյուր քառասուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «180000 (մեկ հարյուր ութսուն հազար)» թվով և բառերով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

41. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց N 3/4 հասցեի տաղավարի զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 41-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման նախաբանի 3-րդ տողում «22» թիվը փոխարինել «02» թվով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 141-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի N 20 հասցեի հողամասը «Տիգրան Աբգարյան մարտական պատրաստության ակումբ» հայրենասիրական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման տրամադրելու մասին» N 141-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

2) որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին և 2-րդ կետերում «հայրենասիրական» բառից հետո լրացնել «բարեգործական» բառը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

43. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 137-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 08-ի ««Արմոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կառուցապատման իրավունքով հողամասեր օգտագործման տրամադրելու մասին» N 137-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

44. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 166-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թումանյան փողոց N 143/1 հասցեի 0.017345 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման մասին» N 166-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

45. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խ.Ավետիսյանի անվան N 7 երաժշտական դպրոցի դիմացի փողոցը՝ Լալայան փողոցից մինչև Լիսինյան փողոց, անվանակոչել «**Խարատուր Ավետիսյան**» փողոց, համաձայն կից հավելված սխեմայի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետին՝ իրականացնել անհրաժեշտ գործողություններ՝ փողոցի անվանակոչման այդ թվում նաև անվանատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման աշխատանքների հետ կապված:

3.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ ապահովել անվանատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացվող ակտերի:

4.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել աշխարհագրական անվանումների ռեգիստր վարող պետական լիազոր մարմնին՝ անվանակոչման պետական գրանցում իրականացնելու համար:

5.Սույն որոշմամբ անվանակոչված փողոցի վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Շիրակի մարզային վարչության «Կումայրի» բաժնին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության «Կումայրի» անձնագրային բաժանմունքին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանմանը և Գյումրու համայնքապետարանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնին:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

46. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կիրառել արտոնություններ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «Բարեկամության» զբոսայգու վերակառուցման շինարարության թույլտվության տեղական տուրքի և տեղական վճարի նկատմամբ:
2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ազատել սույն որոշման 1-ին կետում նշված տեղական տուրքի և վճարի վճարումներից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

47. ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՔԻ ՇԵԿՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն քաղաքացի Հովհաննես Ավետիքի Շեկոյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2021 թվականի գույքահարկի գումարի նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 60200 (վաթսուն հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Ավետիքի Շեկոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

48. ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն քաղաքացի Արմեն Սամվելի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի դրությամբ գույքահարկի 2019-2021 թվականների մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 357.316 (երեք հարյուր հիսունյոթ հազար երեք հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից,որից 2019-2020 թվականների մայր գումարը կազմում է 193.464(մեկ հարյուր իննսուներեք հազար չորս հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայր գումարը կազմում է 129.000 (մեկ հարյուր քսանինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 322.464 (երեք հարյուր քսաներկու հազար չորս հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, 2019-

2020 թվականների տույժերի գումարը կազմում է 34.852 (երեսունչորս հազար ութ հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մերի Գրիգորի Եղոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

49. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ԹՎՈՎ 1 (ՄԵԿ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՄԱԼՅԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացի փողոց թիվ 46/1 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքից թվով 1 (մեկ) 35,25 (երեսունհինգ ամբողջ քսանհինգ) քառակուսի մետր մակերեսով սոցիալական բնակարան անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել քաղաքացի Ամալյա Արտավազդի Վարդանյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ամալյա Արտավազդի Վարդանյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

50. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 13 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՅԱԹ ՍԱՄՍՈՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ԱՐՍԵՆ ՍԱՅԱԹԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 171-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական № 20082021-08-0018) Ա.Խաչատրյան փողոց 13 շենքի թիվ 4 հասցեի 60,69 (վաթսուն ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝ Սայաթ Սամսոնի Ավետիսյանին և Արսեն Սայաթի Ավետիսյանին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանի վերանորոգման համար համայնքի բյուջեից Արսեն Սայաթի Ավետիսյանին հատկացնել 1 944 000(մեկ միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 2-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի

բյուջեի 10.6.1 գործառնական դասակարգման (4728) «Բնակարանային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անտառավան թաղամաս 5, 20Ա շենքի թիվ 19 հասցեի բնակարանը քաղաքացիներ Սայաթ Սամսոնի Ավետիսյանին, Անահիտ Սարիբեկի Ավետիսյանին և Արսեն Սայաթի Ավետիսյանին նվիրատվության եղանակով օտարելու և դրամական միջոցներ հատկացնելու մասին» N 171-Ա որոշումը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Սայաթ Սամսոնի Ավետիսյանին և Արսեն Սայաթի Ավետիսյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

51. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ -0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

52. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 115-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ -0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին» N 115-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

53. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի հոկտեմբերի 08-ը՝ ժամը՝ 12^{00}:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ.Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ.Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Մխիթարյան _____

Ռ. Սարգսյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ.Մաթևոսյան _____

Հ.Պողոսյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՌՈՒԲԵՆ ՍԱՆՈՅԱՆ

ք. Գյումրի
«14» սեպտեմբերի 2021 թվական